«ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ «Ջահուկյանական ընթերցումներ» ամենամյա հանրապետական գիտական նստաշրջանը, որն այս անգամ նվիրված էր ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին: Գիտաժողովն իր աշխատանքները սկսեց մայիսի 22-ին և ավարտեց մայիսի 24-ին: Զեկուցումներով հանդես եկան ինչպես ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատողներ, ասպիրանտներ ու հայցորդներ, այնպես էլ հանրապետության տարբեր բուհերի՝ Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի, Գավառի պետական համալսարանի, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, Հայաստանի ագրարային համալսարանի և այլ հաստատությունների գիտաշխատողներ:

Նստաշրջանը բացեց Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը, *որը կարևորեց նմանատիպ գիտաժողովների անցկացումն ու զեկուցումների համակողմանի քննությունը: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ* Լավրենտի Հովհաննիսյանը՝ *անդրադառնալով Գ. Ջահուկյանի գիտական վաստակին, գիտնականի և մարդու՝ նրա բարձր որակներին: Գ. Ջահուկյանի գործունեության յուրահատուկ մի ոլորտին էր նվիրված* Կարինե Առաքելյանի *զեկուցումը՝ «Առարկայահասկացական և գնահատողական բառաշերտը Գ. Ջահուկյանի բանաստեղծական գրքում»:*

Եռօրյա նստաշրջանի 6 նիստերի ընթացքում լսվեցին չորս տասնյակից ավելի գիտական կուռ, թարմ բովանդակությամբ հագեցած զեկուցումներ: Դրանցից մեծ մասն արծարծում էին հայոց լեզվի պատմությանը *վերաբերող մի շարք խնդիրներ, որոնք նորովի խոսք էին ժամանակակից հայ լեզվաբանության և քերականագիտության մեջ, օգտակար հայոց լեզվի պատմություն և ոճագիտություն ուսումնասիրողների համար: Նմանատիպ զեկույցներով հանդես եկան* Ն. Սիմոնյանը՝ *«Գրաբարի յ նախահիմքով բայերը»,* Գ. Մխիթարյանը՝ *«Հնագույն նվագարանների հայերեն անվանումները Սաղմոսներում»,* Թ. Ասոյանը՝ *«Նկատառումներ Մխիթարյանների հայերենագիտական գործունեության վերաբերյալ»,* Օ. Խաչատրյանն ու Ա. Մուրադյանը՝ *«Բայական և անվանական վերլուծական կազմությունները Հեթում պատմիչի երկում»,* Լ. Գուլզազարյանը՝ *«Մովսես Կաղանկատվացին և նրա «Պատմութիւն Ադուանից աշխարհի» երկի պատմական ժամանակաշրջանը»,* Հ. Հովհաննիսյանը՝ *«Թևավոր մտքեր Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից» գործում»:*

Բարբառագիտությանը *վերաբերող բազմաթիվ զեկուցումներով հանդես եկան* Վ. Կատվալյանը՝ *«Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի ընդհանուր բնութագիրը»,* Մ. Աղաբեկյանը՝ *«ՀԲՄ ծրագիր-հարցարանով հավաքված նյութերի մշակման խնդիրները»,* Գ. Գևորգյանը՝ *«Քերականական համանիշության դրսևորումները հայերենի բարբառների անցյալ ժամանակաձևերում»,* Ժ. Միքայելյանը՝ *«Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները արևելյան խմբակցության մի քանի բարբառներում»,* Լ. Գևորգյանը՝ *«Շիրակի տարածքի խոսվածքների բարբառային հատկանիշների արտացոլումը բանահյուսական նյութերում»,* Ջ. Բառնասյանը՝ *«Յեղասպանությունը՝ նաև լեզվասպանություն»,* Հ. Խաչատրյանը՝ *«Առու հասկացության զուգաբանությունների բարբառային քննություն»,* Ս. Միքայելյանը՝ *«Արաբական բաղաձայնների արտացոլումը Անտիոքի հայերեն բարբառներում. հնչյունաբանական քննություն», որոնք հարուստ նյութ հաղորդեցին բարբառների լեզվանյութին առնչվող հետազոտություններ կատարողներին:*

Նոր մոտեցումներ դրսևորեցին և մի քանի հարցերում նոր դիտարկումներ արվեցին միջնադարյան գրավոր հուշարձանների բառաքննության *ասպարեզում՝* Վ. Խաչատրյան, *«Միջինհայերենյան փոխառությունները 15-րդ դ. ձեռագրերի հիշատակարաններում»,* Խ. Հարությունյան, *«14–15-րդ դարերի հայերեն ձեռագրերի բառապաշարը»,* Ս. Գրիգորյան, *«Բժշկագիտական հասկացությունները Գր. Տաթևացու գրական ժառանգության մեջ»,* Հ. Թադևոսյան, *«Բարբառային բառերի կիրառությունը 17-րդ դարի բժշկարաններում Ասար Սեբաստացի և Բունիաթ Սեբաստացի»:*

Արդի հայերենի գրական նորմավորմանը և բառագիտության քննությանը *վերաբերող գիտական զեկույցներով հանդես եկան* Ռ. Դոխոյանը՝ *«Գրավոր խոսքի ասացականները արդի հայերենում»,* Լ. Ղամոյանը՝ *«Անկախ արմատով և կախյալ բայահիմքով համանունների բառակազմության իմաստաբանությունը»,* Ա. Սանթոյանը *«Զրո. գոյակա՞ն, թե՞ անկանոն թվական»:*

Առանձին հոդվածներ վերաբերում էին տերմինաբանությանը՝ Ա. Գալստյան, *«Լեզվաբանական տերմինների գործածության սխալների և հարակից այլ հարցերի մասին»,* ստուգաբանությանը՝ Ն. Դիլբարյան, *«Բնիկ և փոխառյալ տեղանվանակազմիչները հայերենի տեղանվանահամակարգում»,* Ա. Խաչատրյան, *«Պարսկերենից փոխառված հայկական անձնանունները»,* ոճաբանությանը՝ Շ. Ղազարյան, *«Համեմատությունները Հ. Օշականի փոքր արձակում», որոնք աչքի էին ընկնում իրենց հետաքրքրաշարժ գիտական նորություններով:*

Նյութի քննության իմաստով ամբողջովին նորություն էր հնչյունաբանությանը *վերաբերող* Գ. Գրիգորյանի *զեկուցումը՝ «Արդի փորձառական հնչյունաբանության վիճակը արտերկրում»:*

Անդրադարձ եղավ գրական հայերենի երկու ճյուղերի փոխհարաբերություններին՝ Ա. Մկրտումյան, *«Արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային միավորները և նրանց հոմանշությունը»,* Ս. Տիոյան, «Արդարև *վերաբերականի իմաստային դրսևորումները «Արևակ»-ում», ինչպես նաև՝* հայերենի գրավոր և խոսակցական տարբերակների յուրահատ-

կություններին՝ Ն. Սարգսյան, *«Գործառական ակտիվությամբ բնութագրվող բառաքերականական կարգեր խոսակցական լեզվում»:*

Ընթերցվեցին հայերենի տարբեր դրսևորումներին՝ Գ. Մկրտչյան, *«Միջին հայերենի և Մշո բարբառի անվանական հոլովման զուգադրահամեմատական բնութագիրը»,* հայերենի և այլ լեզուների փոխհարաբերություններին՝ Ա. Մկրյան, *« «Բարկանալ» և «վախենալ» նշանակությամբ կազմաբանական դարձվածների զուգադրական քննություն* (*արդի հայերենի և իտալերենի նյութի հիման վրա*)*»,* ընդհանուր լեզվաբանական՝ Դ. Գյուլզատյան, *«Լեզվի գոյամակարդակների և ստորակարգային մակարդակների հարաբերակցությունը»,* Տ. Սիրունյան, *«Լեզվական խորհրդանիշը որպես ֆունկցիա», և* լեզվամշակութաբանական *հարցերին* ՝ Լ. Խաչատրյան, *«Լեզվամշակութաբանության հարցեր», առնչվող զեկուցումներ:*

Նկատենք, որ զեկուցումների քննարկումների և մտքերի փոխանակության ընթացքում կարևորվեցին բերված նորությունները, վեր հանվեցին լեզվաբանական հետազոտությունների հեռանկարները:

Ընդունված կարգի համաձայն՝ գիտաժողովը եզրափակվեց մտքերի աշխույժ փոխանակումով, կատարվեցին հետաքրքիր հարցադրումներ, ծավալվեց լեզվաբանական և հայերենագիտական խնդիրների աշխույժ քննարկում, առանձին հարցերի շուրջ արվեցին որոշ դիտողություններ, եղան արժեքավոր առաջարկություններ:

Ամփոփելով գիտական նստաշրջանի արդյունքները՝ Վ. Կատվալյանը կարևորեց զեկուցումների թեմատիկ բազմազանությունը, հնչած հարցադրումներն ու կատարված եզրահանգումները, շահեկան քննարկումները՝ եզրակացնելով, որ գիտաժողովն իր նպաստը կբերի հայ լեզվաբանական մտքի զարգացմանը: Բարձր գնահատվեց նաև երիտասարդ մասնագետների ակտիվ մասնակցությունը:

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ